ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Փետրուարի 23-ից 26-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողով՝ ընդլայնուած կազմով։ Ժողովի նիստերն ատենապետեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրէն Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը։

Քառօրեայ ժողովի ընթացքում քննարկուեցին պատերազմի հետեւանքով արձանագրուած կորուստների, ներքաղաքական իրավիճակի, յետպատերազմեան վտանգների, զոհուածների ընտանիքների, գերութեան մէջ յայտնուածների, անյայտ կորածների, պատերազմից տուժած միւս անձանց, ինչպէս նաեւ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան հետ առընչուած խնդիրներ, եւ անդրադարձ կատարուեց յիշեալ հարցերի ուղղութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ձեռնարկուող քայլերին։

ԳՀԽ անդամները կարեւորեցին Եկեղեցու հետեւողական ջանքերը՝ ի նպաստ հանրային կեանքում առկայ զանազան մարտահրաւէրների յաղթահարման։ Կենսական նկատուեց անհրաժեշտ հոգեւոր խնամքի հետ մէկտեղ շարունակելու դեռեւս պատերազմի օրերին Եկեղեցու նախաձեռնած հումանիտար աջակցութեան ծրագրերը՝ թեթեւացնելու պատերազմի հետեւանքով առաջացած սոցիալական խնդիրները, նպաստելու Հայաստանում ապաստան գտած արցախցի ընտանիքներին հնարաւորութեան դէպքում վերադառնալ իրենց բնակութեան վայրերը։

Գերագոյն հոգեւոր խորհուրդն ի մասնաւորի թելադրեց շարունակել գերութեան մէջ յայտնուածների վերադարձի եւ անյայտ կորածների յայտնաբերման ուղղութեամբ տարուող աշխատանքները։

Մասնաւոր մտահոգութիւն արտայայտուեց ՀՀ զինուած ուժերի հրամանատարութեան փետրուարի 25-ի յայտարարութեան եւ վարչապետի արձագանքին հետեւած նոր լարուածութեան կապակցութեամբ, որի առընչութեամբ Գերագոյն հոգեւոր խորհուրդը հանդէս եկաւ առանձին յայտարարութեամբ։

ԳՀԽ անդամներին ներկայացուցեց նաեւ Մայր Աթոռի կրթական հարցերով ենթախմբի զեկոյցը ԿԳՄՍ նախարարութեան կողմից նախաձեռնուած կրթական բարեփոխումների եւ ի մասնաւորի՝ հանրակրթական դպրոցում «Հայոց Եկեղեցու պատմութիւն» առարկայի յետագայ դասաւանդման շուրջ նախարարութեան ներկայացուցիչների հետ ունեցած քննարկումների արդիւնքների վերաբերեալ։ Տեղեկացուցեց, որ ենթախումբը կրթական բարեփոխումների կարեւորութիւնը դիտարկում է ապագայ սերնդի բացառաբար հոգեւոր-ազգային կրթութեան եւ դաստիարակութեան համատեքստում եւ այս ուղղութեամբ պնդում է Հայոց Եկեղեցու պատմութեան ամբողջական ծաւալով, իբրեւ առանձին առարկայ ուսուցման անհրաժեշտութիւնը։ Միաժամանակ մտահոգութիւն արտայայտուեց պետական լիազօր համապատասխան մարմնի կողմից առարկայի առընչութեամբ որդեգրուած ոչ ընդունելի մօտեցումների կապակցութեամբ։

Գերագոյն հոգեւոր խորհուրդը, ընդգծելով «Հայոց Եկեղեցու պատմութիւն» առարկայի դասաւանդման կարեւորութիւնը, թելադրեց ենթախմբին մէկ անգամ եւս գրութեամբ ԿԳՄՍ նախարարութեան ուշադրութեանը յանձնել «Հայոց Եկեղեցու պատմութիւն» առարկայի դասաւանդման հետ կապուած՝ Եկեղեցու դիրքորոշումները։

Քննութեան առնուեցին նաեւ բարեգործական որակուող ծրագրերի շրջանակներում Մայր Աթոռի կողմից իրականացուող մի շարք ծառայութիւնների եւ աշխատանքների հետ կապուած հարցեր։ Ընդգծուեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարեգործական մի շարք ծրագրեր պետական համապատասխան լիազօր կառոյցի կողմից որակուել են որպէս այդպիսին, եւ աշխատանքներն այդ ուղղութեամբ ընթանում են։ Միաժամանակ մտահոգութեամբ արձանագրուեց, որ որոշ խնդիրներ են առաջացել Մայր Աթոռի կողմից ներկրուող ապրանքների, մասնաւորապէս՝ մոմի հումքի մաքսազերծման հարցում։ Առաջացած յիշեալ խնդիրների պատճառով էապէս նուազել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմերի պաշարները, ինչն առաջիկայում դժուարացնելու է եկեղեցիներում մոմավառութեան պատշաճ կազմակերպման գործընթացը։

Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամներն իրենց տարակուսանքն արտայայտեցին դրսեւորուած նման մօտեցումների առիթով՝ նկատի ունենալով, որ Եկեղեցին երբեւէ, անգամ խորհրդային շրջանում, նման դժուարութիւնների առջեւ չի գտնուել։ Գերագոյն հոգեւոր

խորհուրդը թելադրեց Մայր Աթոռի համապատասխան կառոյցներին պետական պատկան մարմինների հետ քննարկել յիշեալ խնդիրները եւ հետամուտ լինել դրանց կարգաւորմանը։

Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովում լսուեցին զեկոյցներ, եւ քննարկումներ ծաւալուեցին Ազգային-եկեղեցական ժողովի գումարման կազմակերպչական աշխատանքների, Մայր Տաճարի ամրակայման եւ հիմնանորոգութեան ընթացքի մասին։ Ներկայացուեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2020 թուականի գործունէութեան տեղեկագիրը։

Ժողովը փակուեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքի խօսքով եւ աղօթքով։